

զայ, քաղաքիս Սէն-ձորճ եկեղեցիին մէջ ներկայ գտնուեցան յուզարկաւորութեանը տեղւոյս Անկլիքան եպս. Գեր. Տ. Ֆ. Կ. Պրատուի, որ օր մը առաջ կնքեց մահկանացուն, ինքնաշարժի ցաւալի արկածի մը հետեանօք:

※ 18 Դեկտ. Ուր. — Ի զիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Փոխանորդ Գեր. Տ. Գէորգ Վրդ. և առժամեայ Աւագ-Թարգման Հոգ. Տ. Գրիգոր Արեւազայ, Գուրգան Պայրամի առթիւ շնորհաւորական այցելութիւն տուին քաղաքիս Իսլամական Բարձր Ժողովին, և աւագանիէն Քաղաքացեալ Մսթաֆա Պէյ Էլ-Խալաթիին, Ձիֆ-Սէքրէթարիի օգնական Բուհի Պէյ Ապտէլնատիին, Իսմայիլ Պէյ Հիւսէյի-նիին և Բաղըպ Պէյ Նէշաշիպիին:

※ 26 Դեկտ. Եր. — Եւրօպացւոց Ս. Եմնդեան տօնին առթիւ, Ի զիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Լուսարարացեալ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ., ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տ. Ներսէս, Հայկազուն, Պարգև Վարդապետաց և առժամեայ Աւագ Թարգման Հոգ. Տ. Գրիգոր Արեւազայ, շնորհաւորական այցելութիւն տուին Ֆրանչիսկեան Միաբանութեան Կիւտոտիին և Յոյն Կաթողիկոց Փոխանորդին: — Նոյն առթիւ, Գեր. Լուսարարացեալ Հայրը և Հոգ. առժամեայ Աւագ-Թարգմանը այցելեցին Անկլիքան եպիսկոպոսարանը, Հայ Կաթողիկոց Պատր. Փոխանորդին, Սկոլտիական երկրատունը և Սիոնի Տօրմիսիօնի Վանքի Մեծաւորին:

Ամեն. Ս. Պատրիարք Հօր հիւանդութեան առթիւ հետեւեալ անձնաւորութիւնք այցելած են Պատրիարքան, եւ տեսակցելով Սրբազան Հիւանդին հետ արագ ապաքինում եւ կատարեալ առողջութիւն մտաբան են Նորին Ամենապատուութեան:

※ 8 Հոկտ. - 22 Նոյեմ. — Ամեն և Ատէս փաստարաններ. — Փաստարան Ֆայիլ Պէյ Հատատատ. — Կանոնիկոս Պրիմէնէ. — Երուսաղէմի Անկլիքան եպս. Գեր. Տ. Ֆ. Կ. Պրատու, ընկերակցութեամբ Կանոնիկոս Պրիմէնէի. — Դաղէի քաղաքացեալ Ռիւշտի Պէյ Շաւուա, ընկերակցութեամբ քաղաքիս աղգայիններէն զեղազորժ Տիար Յակոբ Արսէնեանի. — Դամասկոսի Օսմ. Դրամատան Տնօրէն Պր. Շարլ Բանտէլի:

※ 26 Նոյեմ. Եշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ուղևորեցաւ Ռեմիէ, ձմեռը հոն անցնելու համար ըստ բժշկաց խորհուրդին: Նորին Ամենապատուութեան ընկերացան Լուսարարացեալ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ., վանուչս բժիշկ Տօքթ. Ն. Եաղլեան և հիւանդապահուհի Օր. Ուստանա Տէյլիբէնճեան, Միաբանութեան անդամներէն հոգեշնորհ հայրեր պարբերաբար երկու-երեք օրուան համար կ'այցելեն Նորին Ամենապատուութեան. Ի Ռեմիէ:


※ 29 Նոյեմ. Կիր. — Հիւանդութի այցելութեան եկան տեղւոյս Իսլամական Բարձր Ժողովի կողմէ Լիմին Ապտէլնատի և Եուսէֆ Սըտգը Թահպուպ էֆէնտիները, և այցետուն ձգեցին:

Ի Ռեմիէ Նորին Ամենապատուութեան այցելած են հետեւեալք:

※ 4 Դեկտ. Ուր. — Ռեմիէի Յունաց Հոգ. Տեսուչը, որուն՝ հետեւեալ օրը Ի զիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր փոխադարձ այցելութիւն տուին Հոգ. Տ. Տ. Հայկազուն և Պսակ Վարդապետներ:

※ 9 Դեկտ. Դշ. — Ռեմիէի Լատինաց Հոգ. Տեսուչը, որուն՝ 12 Դեկտեմբերին, Ի զիմաց Նորին Ամենապատուութեան փոխադարձ այցելութիւն տուաւ Հոգ. Տ. Պսակ Վրդ.:

※ 14 Դեկտ. Բշ. — Ռեմիէի քաղաքացեալ Շէյխ Մսթաֆա էֆէնտի, որուն՝ նոյն օրը Ի զիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր փոխադարձ այցելութեան գացին Լուսարարացեալ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. և Հոգ. Տ. Պսակ Վրդ.:



Վերջերս ցաւով իմացանք մահը Ռուժանիոյ առջնորդ Յուսիկ Արքեպս. Զօրաբեանի՝ մին մեր լաւագոյն ու պատրաստուած եկեղեցականներէն որուն մահը թանկագին կորուստ մըն է եկեղեցիին: Ինձած է 1871 ին Ն. Նախիջևան: Աւարտել է վերջ Ն. Նախիջևանի թեմական վարժարանն ու Գէորգեան ձեմարանը, Կոմիտաս և Եղնիկ իր դասընկերներուն հետ Դերմանիա կը զրկուի համալսարանական ուսում առնելու համար: Կը հետեւի աստուածարանութեան, փիլիսոփայութեան և պատմութեան՝ Պերլին, Հալլէ և Լայքցիկ, ուր կ'աշակերտի Հառնաքի, Վուստի, Մալքերի, Քասուչի և Մամդէնի: Չեաք կը բերէ նաև ուս համալսարանի ցենդ:

Երկար ատեն էջմիածնի ձեմարանի մասնագիտական բաժիններում աւանդած է Հայ և Ընդհանուր եկեղեցւոյ պատմութիւն, և ունեցած՝ տեսչական պաշտօն Կարապետ եպիսկոպոսի և Կ. Կոստանեանցի վերատեսչութեան օրերուն: Ամենափափուկ պայմաններու մէջ, իբր կրօնասոյց եօթ տարի պաշտօնավարած է նաև Մոսկուայի Լազարեան ձեմարանը, Եղած է զիւսնապետ՝ Խրիմեան և Իղմիրլեան կաթողիկոսներու օրով:

1920 էն Ի վեր կը մտար առաջնորդ Ռուժանահայ թեմին, որուն օճմանադրութիւնը մշակելով կառավարութեան ներկայացուցի փաւերացումն: Հակառակ իր կարողութիւններուն և պատրաստութեան, մեր մտաւոր ու հանրային ծառայութեան մէջ հանգուցեալը երկրորդական զիժի կուգայ. սակայն իրեն չպակսեցան բնաւ բարեացակամութիւններ մեր ցաւերուն համար:

Հանգիստ իր հոգիին: